«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

ԱՊՐԻ'Ր, ՀԱՆՈՒՆ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վրացի ընթերցողներին ներկայացնելով հայ դասական ու արդի գրողներին՝ առանձին գրքով ու նաեւ ֆեյսբուքյան իմ էջում:

«Վրաստանն» էլ իր էջերում է այս կարեւոր առաքելությունն իրականացնում ու, եթե ես մշակութային, ապա նա նաեւ քաղաքական, հասարակական, սոցիալական... եւ այսպես արդեն հարյուր տարի: Հեշտ չէ, ինքս գիտեմ, լծված լինելով այս գործին: Հանդիպում են դժվարություններ, խոչընդոտներ, ոչ բարյացակամ տրամադրված մարդիկ, բայց առաջ գնալու, չկոտրվելու կամքն ու երկու ժողովուրդներին նորից ու է'լ ավելի կապելու նպատակն է դառնում այն զորեղ ուժը, որն արդեն հարյուր տարի ունի «Վրաստանը», դառնում է այն օրինակը, որ երբեք նահանջել ու առավելեւս կանգ առնել պետք չէ, եթե կա նպատակ:

Ինչ խոսք, այս ամենի ակունքում մարդիկ են: Խմբագիրներ, լրագրողներ, սրբագրիչներ, տեխնիկական աշխատողներ, ովքեր ամեն մեկն իր հետքն է թողել ու թողնում, իր ուսերին առել ու առնում ժամանակի պատասխանատվությունը: Այս պարագայում խոնարհումս Վան Բայբուրթյանին ու աշխատակազմին, ովքեր շարունակում են կյանք ու շունչ տալ այս կարեւոր պարբերականին, մեր բոլորի սիրելի «Վրաստանին»:

Կրկին ու կրկին շնորհավոր, բարի ու անխափան ընթացք՝ հանուն հայ-վրացական բարեկամության:

ԳԵԼԱ ԳԵԼԱՇՎԻԼԻ
Դիվանագետ, հայագետ, թարգմանիչ

ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ ՔԵԶ, «ՎՐԱՍՏԱՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ժամանակին 850 բնակիչ ունեցող գյուղը բաժանորդագրվում էր 300 օրինակից ավելի «Վրաստան», թերթի համարները փոխանցվում էին ձեռքից-ձեռք: Ցավոք, հիմա գյուղում բնակիչների թիվը շատ է նվազել, թեպետ, եթե կարելի է այսպես ասել, «Վրաստանի» նկատմամբ ջերմ վերաբերմունքը նոր, ավելի էական մակարդակի է հասել: Դա պայմանավորված է ոչ միայն կենսական նշանակության հավաստի տեղեկատվության օբյեկտիվ աղբյուրների սղությամբ ու պակասով, եւ այն, որ «Վրաստանը» գրեթե միակն է, որ գյուղի բնակիչներին ապահովում է ստույգ տեղեկատվությամբ, այլեւ նրանով, որ «Վրաստանը» յուրատեսակ կամուրջ է դարաքովցիների ու վիրահայ համայնքի մյուս հատվածների, Մայր Հայաստանի հետ, տեղեկատու եւ խորհրդատու՝ կենսական, իշխանության մարմինների հետ հարաբերությունների հարցերում:

Սիրելի «Վրաստան», երկարակեցություն քեզ, մեր բարի խորհրդատու եւ հուսալի բարեկամ, երջանկություն եւ ստեղծագործական հաջողություններ թերթի խմբագրության բոլոր աշխատակիցներին:

ԲԱԲԿԵՆ ՎԱՅՐԱԴՅԱՆ
Ծալկայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի ներկայացուցիչ Դարաքով գյուղում:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՏՈՒՆԸ ՍԿՍԵԼ Է COVID ՔԱՐՏԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ

Օգոստոսի 17-ից Արդարադատության տներում եւ հասարակական կենտրոններում անվճար տրվում են Covid քարտեր:

Վրաստանի Արդարադատության նախարարության մամուլի ծառայության տվյալներով, արդարադատության նախարար Ռատի Բրեգաձեն եւ առողջապահության նախարար Էկատերինե Տիկարաձեն համատեղ դիտարկել են փաստաթղթի տրամադրման գործընթացը: Նախարարներն արդեն օգտվել են Թբիլիսիի Արդարադատության տանը նոր ներդրված ծառայությունից եւ վերցրել են Covid քարտեր:

Փաստաթուղթը հասանելի է Վրաստանի գրեթե բոլոր մասնաճյուղերում: Այն տեղեկություն է տալիս անձի ամբողջական կամ մասնակի պատվաստման եւ ՊՇՌ-ի վերջին հետազոտության մասին: Նշվում է նաեւ պատվաստանյութի եւ անձնական տվյալների եզակի QR կոդը եւ վավերացվում Արդարադատության տան կնիքով: Մինչ այժմ Covid քարտը տրվում էր միայն պատվաստումներ իրականացնող բժշկական հաստատություններում:

Covid քարտ ստանալու համար դիմում ներկայացնելը անվճար է: Փաստաթուղթը տրվում է ID քարտի հիման վրա՝ դիմումը ներկայացնելուց հետո: Ծառայություն ստանալը հնարավոր է առանց այցի նախնական ամրագրման:

Եթե Covid քարտը քաղաքացուն անհրաժեշտ է Վրաստանից դուրս՝ ապոստիլով / օրինականացմամբ վավերացված ներկայացնելու համար, նա կկարողանա այս ծառայությունը ստանալ տեղում՝ արդարադատության տներում եւ համայնքային կենտրոններում:

Արդարադատության նախարարությունից հայտնում են, որ Արդարադատության նախարար Ռատի Բրեգաձեն հայտարարել է, որ լիարժեք պատվաստված քաղաքացիները կօգտվեն Արդարադատության նախարարության ծառայություններից:

Արդարադատության նախարարության տվյալներով, Covid քարտը ակտիվորեն օգտագործվելու է արտերկրում: Պետությունն արդեն աշխատում է ԵՄ-ի հետ՝ մոտ ժամանակներս պատվաստված մարդկանց մասին տեղեկատվությունը միջազգային տվյալների բազա հասցնելու համար, ինչը կհեշտացնի քաղաքացիների ճանապարհորդությունը՝ թե' բիզնեսում, թե' զբոսաշրջության մեջ:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԻՆԱ ԽԱՉԱՏՈՒՐՈՎԱՆ ԵՎ ԹԵՆԳԻԶ ՄԻԿՈՅԱՆՑԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՏ-ՍԻՄՊՈԶԻՈՒՄԻՆ

Էջմիածնի Բալենիների փողոցի գողտրիկ անկյունում գտնվող «Մաչանենց» տունը հեղինակություն է վայելում ոչ միայն այդ քաղաքում, Հայաստանի ողջ տարածքում, այլեւ նրանից դուրս:

Այն նաեւ վաղուց սիրո իր մեծ չափաբաժինն ունի նկարիչների եւ ընդհանրապես աշխարհի տարբեր երկրներում գործող արվեստի գործիչների շրջանում: Այստեղ էքսկուրսիաներ են կազմակերպվում տարբեր տարիքի մարդկանց համար, գործում է Արվեստաց դպրոց, Ազգային խոհանոցի դպրոց, Թատրոն ստուդիա եւ նմանը չունեցող «Ինովացիոն էթնիկ մարզային կենտրոն», ուր սովորում է շուրջ 250 սան, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, ծնողազուրկ եւ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ: Գալով «Մաչանենց» կարող եք այցելել նաեւ տարբեր պատկերասրահներ, թանգարաններ ու աշխարհում միակ «Համաշխարհային պոետների գինետուն», մասնակցել բրուտագործության եւ կիրառական արվեստի այլ ուղղությունների վարպետաց դասերին:

«Մաչանենցը» մի ավանդույթ նույնպես վաղուց կրում է իր մեջ: Ահա երկար տարիներ տունն իր հարկի տակ Միջազգային արտ-սիմպոզիումների անցկացման վայր է դառնում: Այստեղ են ժամանում տարբեր երկրներից նկարիչներ՝ նկարելու կյանքը, փորձով փոխանակվելու, նպաստելու միջմշակութային հաղորդակցությանը, համալրելու տեղի գեղարվեստական սրահի հավաքածուն:

Թբիլիսցի հայտնի նկարիչներ Մարինա Խաչատուրովան եւ Թենգիզ Միկոյանցը այստեղ մասնակցեցին հերթական արտ-սիմպոզիումին, որն անցկացվում էր հենց «Մաչանենց» հովանու ներքո: Այստեղ էին ժամանել նաեւ նկարիչներ Ռուսաստանից, Բելառուսից, Արեւմտյան Ուկրաինայից, Մոլդովայից..., որպեսզի հետո այցելեին Ստեփանակերտ, ու արդեն այդտեղ մասնակցեին «Դիզակի գույները» սիմպոզիումին:

Մեզ հետ զրույցում Մարինա Խաչատուրովան եւ Թենգիզ Միկոյանցը պատմեցին, որ Ստեփանակերտում իշխում էին անխախտ խաղաղությունն ու կարգապահությունը, փողոցների սովորական մաքրությունը, իսկ երեկոյան ժամերին՝ զբոսնող քաղաքացիների բազմությունը: Մարդիկ տրամադրված էին դեպի բարին ու նույնիսկ ուրախը: Սա նկարիչների համար հավելյալ խթան էր ստեղծելու համար նույն երանգներով կտավներ՝ լույսի ու գույնի առատությամբ, ջինջ երկնքի փափուկ ամպերով ու տեղին հատուկ կոլորիտով: Սիմպոզիումի պայմանի համաձայն, Թենգիզն ու Մարինան ստեղծեցին հնգական կտավ, որոնք նվիրաբերեցին կազմակերպիչներին եւ Ստեփանակերտ քաղաքին: Գանձասարի մենաստանի, Աստղաշեն եւ Պատարա գյուղերի տեսարաններով նկարները ցուցադրվելով տեղի պատկերասիում՝ կսպասեն իրենց գնորդին, որից ստացած եկամուտը կծառայի շրջանի կարիքներին:

ԱՐՏԵՄ ԿԻՐԱԿՈՋՈՎ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԿԵՆՍԱԿԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է

Վրաստանի Վիճակագրության ազգային ծառայության տվյալներով, 2021 թվականի հուլիսին՝ հունիսի համեմատ, Վրաստանում գոյատեւման մակարդակն աճել է:

2021 թվականի հունիսին աշխատունակ տարիքի տղամարդկանց ապրուստի մակարդակը 214.5 լարի էր, մինչդեռ հուլիսին այդ ցուցանիշն աճեց երեք լարիով եւ 80 թեթրիով՝ ընդհանուր գումարը հասցնելով 218.3 լարիի:

Միաժամանակ, ըստ Վիճակագրության ազգային ծառայության տվյալների, հունիսի համեմատ՝ միջին սպառողի գոյատեւման մակարդակը հուլիսին աճել է 3.4 լարիով եւ կազմել 193.4 լարի:

Հատկանշական է, որ այսուհետեւ Վիճակագրության ազգային ծառայությունն այլեւս չի իրականացնի այս ցուցանիշի հաշվարկումը, քանի որ այս ցուցանիշը չի օգտագործվում պլանավորման եւ որոշումներ կայացնելու գործընթացում:

Վիճակագրության ազգային ծառայությունը սահմանում է կենսական նվազագույնի մակարդակը՝ հիմնվելով նվազագույն պարենային զամբյուղի վրա: Նվազագույն պարենային զամբյուղը պարունակում է սննդի այն քանակությունը, որը ֆիզիոլոգիապես անհրաժեշտ է աշխատունակ տարիքի տղամարդու բնականոն կյանքի եւ աշխատունակության համար: Սննդամթերքի զամբյուղը բաղկացած է 40 ապրանքներից՝ հացից, հացահատիկից, մսից, կաթնամթերքից, բանջարեղենից եւ հրուշակեղենից:

Խորագիրը պատրաստեց ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵՆ

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՎՍ ԲԱՐՁՐԱՑԵԼ Է

Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության տվյալներով, 2021 թվականի երկրորդ եռամսյակում Վրաստանում գործազրկության մակարդակը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 3,8 տոկոսով եւ կազմել 22,1 տոկոս:

Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության տվյալների համաձայն, 2021 թվականի երկրորդ եռամսյակում աշխատուժը (տնտեսապես ակտիվ բնակչության) կազմել է աշխատունակ տարիքի բնակչության 51,4 տոկոսը (15 եւ ավելի բարձր տարիքի), ինչը 1,1 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ:

Քաղաքային տիպի բնակավայրերում աշխատուժի մասնակցության մակարդակը (ակտիվության մակարդակ) աճել է 1,0 տոկոսով, իսկ գյուղական բնակավայրերում՝ 1,3 տոկոսով: Քաղաքային տիպի բնակավայրերում զբաղվածության մակարդակը նվազել է 0,5 տոկոսով, իսկ գյուղական բնակավայրերում՝ 1,7 տոկոսով:

COVID - 19

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԴԵՆ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ Է ԳՐԵԹԵ 900 ՀԱԶԱՐ ՄԱՐԴ

Վրաստանի հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի օգոստոսի 19-ի տվյալներով, Վրաստանում ընդհանուր առմամբ իրականացվել է 883 570 պատվաստում, այդ թվում՝ ամբողջությամբ պատվաստվել է 258 303 մարդ:

Միաժամանակ, պաշտոնական տվյալների համաձայն, վերջին 24 ժամվա ընթացքում պատվաստվել է 26 հազար 363 մարդ:

ԹԱՄԱՐ ԳԱԲՈՒՆԻԱ. «ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍՈՎ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԱՎԵԼԻ ՔԱՆ 98 ՏՈԿՈՍԸ ՊԱՏՎԱՍՏՎԱԾ ՉԻ ԵՂԵԼ»

Ինչպես հայտարարեց Վրաստանի առողջապահության փոխնախարար Թամար Գաբունիան, գերատեսչությունը վարակվածների հետազոտություն է անցկացրել մարտից մինչեւ օգոստոսի 17-ը եւ հետազոտության արդյունքում պարզվել է, որ, ըստ պատվաստված մարդկանց թվի, վարակվածների ավելի քան 98 տոկոսը պատվաստված չի եղել:

- Ինչ վերաբերում է վերակենդանացման բաժանմունքում բուժմանը, ապա, մինչ այժմ վերակենդանացման բաժանմունքում բուժվել է մոտ 3500 մարդ, այդ թվում՝ մոտ մեկ տոկոսը եղել է մեկ անգամ պատվաստված, իսկ 0,3 տոկոսը՝ երկու անգամ: 3500 մարդուց միավոր դեպքեր են արձանագրվել երկու անգամ պատվաստված անձանց շրջանում: Սա նշանակում է, որ պատվաստանյութն իրականում աշխատում է, պաշտպանում է հոսպիտալացումից եւ դեպքերի ծանր զարգացումից, սա պատվաստվելու եւս մեկ հիմնական պատճառ է,- նշել է Թամար Գաբունիան:

ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂՐԵԼԻՋԵ. «ԵԹԵ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՆՄԱՆ ՀԱՄԱՃԱՐԱԿ ԼԻՆԻ, ԱՊԱ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԵԿՆԱՐԿԸ ԿՀԵՏԱՁԳՎԻ»

Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի տնօրեն Ամիրան Գամղրելիձեի խոսքով, Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնը խորհուրդ է տալիս սեպտեմբերի 15-ից վերսկսել ուսման գործընթացը, եթե կորոնավարակի տարածման մակարդակը չորս տոկոսից ցածր լինի:

Նրա խոսքով, եթե մինչեւ ուսումնական մեկնարկը կորոնավարակի տարածման մակարդակը մնա բարձր, հավանական է, որ ուսման գործընթացը չվերսկսվի:

Ամիրան Գամղրելիձեն միաժամանակ հույս հայտնեց, որ սահմանափակումները, որոնք ներկայումս գործում են երկրում, ինչպես նաեւ՝ պատվաստումները կկանխեն վարակը:

- Եթե սեպտեմբերի 15-ին նման համաճարակ լինի, ապա Հիվանդությունների վերահսկման կենտրոնը չի կարող առաջարկել ուսման գործընթացի մեկնարկը: Մենք ակնկալում ենք, որ սահմանափակումները, պատվաստումների ակտիվացումը պետք է լրջորեն նվազեցնեն նոր դեպքերի թիվը երկրում: Այսօր մենք ունենք մոտ 10 տոկոս, եթե դրական տոկոսը իջնի չորս տոկոսից, այն դեպքում միայն կրթության վերսկսման նախադրյալ կսեղծվի,- ընդգծեց Ամիրան Գամղրելիձեն:

Անդրադառնալով պարտադիր թեստավորման խմբերի թեմային, Ամիրան Գամղրելիձեն նշեց, որ սեպտեմբերի 15-ից պարտադիր թեստավորման խմբերը միայն կրկնակի պատվաստումների դեպքում կփորձարկվեն պետության հաշվին:

- Մենք հսկայական գումարներ ենք ծախսում պետական թեստերի վրա, վերջին ամիսների ընթացքում ունենք միջինը 38 հազար ՊՇՌ եւ հակագեն թեստեր: Հավանաբար, սեպտեմբերի 15-ից էսեցիալ խմբերը, ովքեր այս պահին պատվաստվում են պետության հաշվին, այլեւս անվճար չեն պատվաստվի: Մինչդեռ երկու դեղաչափով պատվաստման դեպքում կրկին կֆինանսավորվեն պետության կողմից: Թող բարեհաճեն եւ պատվաստվեն, եթե՝ ոչ, ապա պարտավոր կլինեն որոշակի հաճախականությամբ շաբաթական մեկ անգամ կամ երկու շաբաթը մեկ անգամ թեստավորվել: Այնուհետեւ հարց կբարձրացվի, թե թեստավորումն անցկացվելու է գործատուի, թե անձի հաշվին, այս առաջարկը նույնպես քննարկվում է,- ասաց Ամիրան Գամղրելիձեն:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ 211 ՄԻԼԻՈՆԸ

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում անցել է 211 134 024-ը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 4 422 352-ը: Ապաքինվել է 189 030 573 մարդ:

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ կա հաստատված **38 231 972** դեպք: Այստեղ մահացածների թիվը **643 113** է, երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **32 365 996**-ի, մահացածներինը՝ **433 758**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **20 494 212**, մահացել՝ **572 733** մարդ: **Ռուսաստանում** կորոնավիրուսով վարակվել է **6 705 523**, վարակի հետեւանքով մահացել՝ **174 485** մարդ: Ռուսաստանին հաջորդում են Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Թուրքիան, Արգենտինան, Կոլումբիան ու Իսպանիան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **236 742**-ի, մահացածներինը՝ **4 732**-ի, ապաքինվածներինը՝ **223 736**-ի:

Ադրբեջանում վարակվածների թիվը կազմում է **384 886** մարդ: Վարակից մահացել է **5 2521,** ապաքինվել՝ **343 407** մարդ:

Վրաստանում, վերջին տվյալներով, վարակվել է **506 040,** մահացել՝ **6 649,** ապաքինվել՝ **440 370** մարդ:

*Օգոստոսի 20-ին կորոնավիրուսով վարակման **4 743** նոր դեպքերից **1 860**-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ **677**, Իմերեթիում՝ **573**, Քվեմո Քարթլիում՝ **277**, Շիդա Քարթլիում՝ **304**, Գուրիայում՝ **120**, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ **297**, Կախեթիում՝ **386**, Մցխեթա-Մթիանեթիում՝ **113**, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ **38**, Սամցխե-Ջավախեթիում՝ **98**:*

ՏՈՒԳԱՆՔՆԵՐ՝ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հինգ օրվա ընթացքում, օգոստոսի 10-15-ը ներառյալ, Աշխատանքի տեսչական ծառայությունը, վերահսկող այլ գերատեսչությունների հետ միասին, փակել է մինչեւ 15 օբյեկտ եւ տուգանել 30 ֆիզիկական եւ իրավաբանական անձի:

Մասնավորապես, արգելված գործունեության իրականացման եւ հանձնարարականների խախտման հիման վրա Աշխատանքի տեսչական ծառայությունը տուգանել է 30 տնտեսական օբյեկտ: 18 իրավաբանական անձ տուգանվել են 10.000 լարիով, իսկ 12 ֆիզիկական անձ՝ 2000 լարիի չափով: 13 օբյեկտ փակվել է:

Ամբողջ երկրում իրականացվել է ընդհանուր առմամբ՝ 2391 ստուգում: Տրվել է 2142 գրավոր եւ 249 բանավոր նախազգուշացում:

ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՀԱՅԵՐԵՆՈՎ

Ազգային փոքրամասնություններին կորոնավիրուսի դեմ պատվաստումների վերաբերյալ տեղեկատվական քարոզարշավի շրջանակներում, օգոստոսի 19-ին, Վրաստանի Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետական նախարարի խորհրդական Լիա Գիգաուրին, Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի պետական լիազոր Բեսիկ Ամիրանաշվիլու ուղեկցությամբ, այցելեց Նինոծմինդա, հանդիպում ունեցավ տեղի հասարակական կազմակերպությունների եւ լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ:

Պետնախարարի խորհրդականը ավելի ուշ հանդիպումներ ունեցավ նաեւ մունիցիպալիտետի Գանձա եւ Փոկա գյուղերի բնակիչների հետ: Հանդիպմանը Լիա Գիգաուրին տեղացիներին հանձնեց ազգային փոքրամասնությունների համար նախատեսված պատվաստումների վերաբերյալ տեղեկատվական գրքույկներ եւ բժշկական շնչադիմակներ:

Հանդիպմանը Լիա Գիգաուրին նշեց, որ տեղեկատվական արշավի նպատակը յուրաքանչյուր քաղաքացուն պատվաստման գործընթացի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելն է:

- Պետական նախարարի գրասենյակը շարունակում է լայնածավալ տեղեկատվական արշավ՝ կանխելու կորոնավիրուսի տարածումը: Այս անգամ մենք այցելում ենք ազգային փոքրամասնություններով հոծաբնակ Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջան՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն բնակավայրերին, որոնք գտնվում են կենտրոնից հեռու, եւ որտեղ վրացերենի իմացության հետ կապված որոշակի խնդիրներ կան: Մեր նպատակն է՝ ցրել պատվաստումների դեմ տարածվող առասպելները: Այսօր ամենահրատապ խնդիրը պատվաստումն է: Այդ իսկ պատճառով մենք հանդիպում ենք բնակչության հետ, եւ բաժանում ենք նրանց հատուկ իրենց մայրենիով հրապարակված գրքույկներ: Հուսով ենք, որ այս նյութերին ծանոթանալուց եւ մեզ հետ հանդիպելուց հետո, նրանք կունենան բոլոր հարցերի պատասխանները եւ կկայացնեն գիտակցված որոշում, կատարելով ճիշտ ընտրություն,- ասաց Լիա Գիգաուրին:

Covid-19 պատվաստումների վերաբերյալ տեղեկատվական թերթիկները պատրաստվել են Վրաստանի կառավարության աշխատակազմի եւ Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի հետ համատեղ եւ կազմակերպվել են Վրաստանի ռազմավարության եւ զարգացման կենտրոնի կողմից:

Էթնիկ փոքրամասնություններով խիտ բնակեցված գյուղերում, որտեղ տեղեկատվության հասանելիությունը սահմանափակ է, տեղեկատվական նյութերը կբաժանվեն տնետուն:

- Շատ կարեւոր է պատվաստումների մասին տեղեկատվության տարածումը ազգային փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջաններում, մասնավորապես՝ Ջավախեթիում: Ցավոք, հատկապես Ջավախեթիում, մենք շատ ցածր ցուցանիշ ունեինք, եւ պատվաստման գործընթացը դանդաղ էր, բայց վերջերս, մեկ շաբաթից ավելի է, այս գործընթացն արդեն արագացել է: Մշակել ենք ծրագիր, ըստ որի՝ պատվաստումները կանցկացվեն անմիջականորեն գյուղերում,- հայտարարեց Սամցխե-Ջավախեթիի նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլին:

Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԵՂ ԿԱԶՄՈՎ ՆԻՍՏԻՆ

Օգոստոսի 19-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ղրղզստան աշխատանքային այցի շրջանակում, մասնակցեց Եվրասիական միջկառավարական խորհրդի նեղ կազմով նիստին:

Նիստից առաջ ԵԱՏՄ անդամ պետությունների վարչապետերին հյուրընկալեց Ղրղզստանի նախագահ Սադիր Ժապարովը՝ ողջունելով նրանց Չոլպոն-Ատայում եւ արդյունավետ ընթացք մաղթելով ԵԱՏՄ միջկառավարական խորհրդի նիստին:

«Չոլպոն-Ատա» պետական համալիրում Հայաստանի վարչապետին եւ ԵԱՏՄ անդամ երկրների մյուս վարչապետերին դիմավորեց Ղրղզստանի նախարարների գրասենյակի նախագահ (վարչապետ) Ուլուկբեկ Մարիպովը: Դիմավորման արարողությունից հետո՝ մեկնարկեց նեղ կազմով նիստը:

Նիստում քննարկվեցին Միության գործունեությանը վերաբերող մի շարք հարցեր: Անդրադարձ է եղել ԵԱՏՄ անդամ երկրների փոխադարձ եւ արտաքին առեւտրի ապահովագրական աջակցության միջոցառումներին, գլոբալ կլիմայական օրակարգի իրագործման շուրջ ընդհանուր մոտեցումների մշակման ուղղությամբ անելիքներին եւ այլն:

Օգոստոսի 20-ին կայացավ ԵԱՏՄ միջկառավարական խորհրդի ընդլայնված կազմով հանդիպումը, որտեղ խոսքով հանդես եկավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Որոշվել է Եվրասիական միջկառավարական խորհրդի հաջորդ նիստն անցկացնել այս տարվա հոկտեմբերին, Երեւանում:

Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի նեղ եւ ընդլայնված կազմով հանդիպումների արդյունքներով ստորագրվել են մի շարք փաստաթղթեր:

Ի ՀԱՇԻՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՃԻ, ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԿԿՐՃԱՏՎԵՆ

Հայաստանի կառավարությունը նախատեսում է ռազմավարական հեռանկարում աստիճանաբար անցում կատարել պրոֆեսիոնալ բանակի. ժամկետային եւ զորահավաքային զինծառայության կառուցվածքն էականորեն կփոխվի:

Այս մասին նշված է Հայաստանի կառավարության 2021-2026 թվականների գործունեության ծրագրում, որն ընդունվել է կառավարության կողմից եւ առաջիկայում կուղարկվի խորհրդարան:

Ծրագրում նշվում է, որ Հայաստանի Զինված ուժերի բարեփոխումների մեկնարկած լայնածավալ գործընթացը բաղկացած է ե'ւ կառուցվածքային, ե'ւ բովանդակային փոփոխություններից:

«Հաշվի առնելով զինվորական ծառայության զարգացման ու կատարելագործման հեռանկարները՝ առաջիկայում կառավարությունը ձգտելու է զինծառայության ժամկետների կրճատմանը՝ ի հաշիվ պայմանագրային ծառայության աճի: Սրանով կառավարությունը խթանելու է զինվորական ծառայության շահադրդման թե' նյութական եւ թե' բարոյահոգեբանական մեխանիզմները»,- ասված է ծրագրում:

Նշվում է, որ կառավարությունը բարձրացնելու է Զինված ուժերի կառավարման եւ ղեկավարման համակարգի արդյունավետությունը: Վերանայվելու է Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարությունը, մշակվելու է նոր Ռազմական դոկտրին, Պետության պաշտպանության պլան, կատարելագործվելու են պետությունը պաշտպանության նախապատրաստելու գործիքակազմերն ու ընթացակարգերը:

Ծրագրի համաձայն՝ կառավարությունը շարունակելու է սպառազինության եւ ռազմական տեխնիկայի արդիականացման եւ նոր նմուշների ձեռքբերման գործընթացները: Առավել նպատակային քաղաքականություն է իրականացվելու դաշնակից եւ գործընկեր պետությունների հետ ռազմական եւ ռազմատեխնիկական համագործակցության ոլորտներում:

Կառավարության ուշադրության կենտրոնում մշտապես եղել եւ լինելու է զինծառայողների եւ նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության բարձրացումը, ուստի կառավարությունը մեծացնելու է զինծառայողների նյութական եւ սոցիալական ապահովման երաշխիքները, կատարելագործելու է զինծառայության գրավչության եւ զինծառայողի հեղինակության բարձրացման մեխանիզմները:

«Հայաստանի Հանրապետությունը, ինչպես ցանկացած խաղաղասեր պետություն, Զինված ուժերը զարգացնելու եւ վերափոխելու է ոչ թե ագրեսիայի, այլ ագրեսիայից պաշտպանվելու նպատակով: Հայաստանի Հանրապետությունը տարածքներ նվաճելու մտադրություն չունի»,- ասված է կառավարության ծրագրում:

COVID-19-Ի ԴԵՄ ՉԻՆԱԿԱՆ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՆՈՐ ԽՄԲԱՔԱՆԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի առողջապահության նախարարությունը բանակցությունների շնորհիվ ձեռք է բերել եւ արդեն Հայաստան է բերել COVID-19-ի դեմ պատվաստանյութի նոր խմբաքանակ:

Չինական «Սինոֆարմ» պատվաստանյութի 200 հազար դեղաչափը նախատեսված է 100 հազար հոգու համար: Պատվաստանյութը հասանելի է 18 տարեկանից բարձր բոլոր քաղաքացիների համար՝ առանց սահմանափակումների: Պետությունը անվճար հիմունքներով բոլորի համար ապահովում է պատվաստանյութ, որը մեզ կպաշտպանի COVID-19-ի ծանր ընթացքից եւ մահվան ելքերից:

Հայաստանում կորոնավիրուսի դեմ պատվաստումներ իրականացվում են նաեւ «Sputnik V», «AstraZeneca» եւ «CoronaVac» պատվաստանյութերով:

ՔՆՆԱՐԿՎԵՑ ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՐՑԸ

Օգոստոսի 18-ին Հայաստանի առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը եւ Ռուսաստանի առողջապահության նախարար Միխայիլ Մուրաշկոն հեռախոսազրույցի ընթացքում քննարկել են Հայաստանին COVID-19-ի դեմ ռուսական պատվաստանյութերի մատակարարման հարցը:

Նախարարները, նոր կորոնավիրուսի դեմ պայքարի շուրջ փոխգործակցությանը վերաբերող հարցերից բացի, քննարկել են նաեւ 2021 թ. Ռուսաստանում Առողջապահական ռուս-հայկական ֆորումի անցկացումը:

Կողմերն ընդգծել են Ռուսաստանի եւ Հայաստանի համագործակցության բարձր մակարդակը առողջապահության բոլոր արդիական հարցերում:

ԱՄՍԱԿԱՆ 50 ՀԱԶԱՐ ԴՐԱՄԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԵՐՐՈՐԴ ԵՎ ՀԱՋՈՐԴ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Հայաստանի կառավարությունը ձեռնամուխ է լինելու մշակելու Հայաստանի ժողովրդագրական իրավիճակի բարելավման նոր ռազմավարություն եւ 2021-2026 թվականների գործողությունների ծրագիր, որը նախադրյալներ կստեղծի առաջիկա տարիներին ծնելիության կայուն աճ ապահովելու, իսկ երկարաժամկետ հեռանկարում՝ հանրապետության բնակչության թվի էական աճ գրանցելու համար:

Ժողովրդագրական իրավիճակի բարելավման համատեքստում մշակվելու է օրենքի նախագիծ՝ հստակ ամրագրելով ծնունդների խրախուսումներն ու բազմազավակ ընտանիքներին տրամադրվող սոցիալական երաշխիքները, այդ թվում՝ ընտանիքներին 3-րդ եւ հաջորդ երեխաների համար մինչեւ 6 տարեկանը ամսական 50,000 դրամ ֆինանսական աջակցություն տրամադրելու ձեւով:

Ծրագրի համաձայն՝ կընդլայնվի մինչեւ 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի շահառուների շրջանակը՝ ի հաշիվ չաշխատող մայրերի՝ անկախ նրանց հաշվառման (բնակության) վայրի:

Ծրագրում նշված է նաեւ, որ բարելավվելու է երեխա ունեցող ծնողների աշխատանքը եւ երեխայի խնամքը համատեղելուն աջակցող միջոցառումները, իրականացվելու են գյուղաբնակ երիտասարդ եւ երեխա ունեցող ընտանիքներին աջակցելու, այդ թվում՝ եկամտաստեղծ գործունեությանը միտված պետական աջակցության թիրախային ծրագրեր, թիրախային ծրագրեր են մշակվելու նաեւ հայրենադարձ ընտանիքների համար:

ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐ

Հիմք ընդունելով վարչապետի առաջարկությունը՝ Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի հրամանագրով Արարատ Միրզոյանը նշանակվել է Հայաստանի արտաքին գործերի նախարար:

Մինչ այդ, Միրզոյանը երկրի Ազգային ժողովի նախագահն էր:

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ՝ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Արմեն Գրիգորյանին նշանակել է Անվտանգության խորհրդի քարտուղար:

Ավելի վաղ կայացված որոշմամբ,, Գրիգորյանն ազատվել էր Հայաստանի արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալի պաշտոնից:

Մինչ արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ նշանակվելը, Արմեն Գրիգորյանը նախկինում զբաղեցրել է Անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնը:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱԳՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻ ԵՌԱԿՈՂՄ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայաստանի փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը, Ռուսաստանի Դաշնության կառավարության նախագահի տեղակալ Ալեքսեյ Օվերչուկը եւ Ադրբեջանի փոխվարչապետ Շահին Մուստաֆաեւը վերսկսել են եռակողմ աշխատանքային խմբի աշխատանքը: Օգոստոսի 17-ին Մոսկվայում կայացած նիստում կողմերը քննարկեցին Հարավային Կովկասի տարածաշրջանում տրանսպորտային հաղորդակցությունների վերականգնման հեռանկարները: Քննարկեցին նաեւ երեք երկրների նախագահների 2021 թվականի հունվարի 11-ի հայտարարության շրջանակներում իրականացվող հետագա աշխատանքների ընթացքը:

ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԿՀԱՍՏԱՏՎԻ 85 ՀԱԶԱՐ ԴՐԱՄԻ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից ներկայացված մինչեւ 2026 թվականը Կառավարության տնտեսական եւ սոցիալական ապահովության ծրագրի, մինչեւ 2026 թվականը ՀՆԱ-ի տարեկան միջին աճի նվազագույն մակարդակի աճը պետք է կազմի 7 տոկոս, բարենպաստ արտաքին տնտեսական պայմաններում՝ 9 տոկոս եւ ապահովել 10 տոկոսից ցածր գործազրկության մակարդակ, նվազագույն կենսաթոշակի եւ կենսաթոշակի միջին չափերը պետք է հավասարեցնել պարենային եւ սպառողական զամբյուղների արժեքներին, նվազագույն աշխատավարձը սահմանել 85 հազար դրամ, վերացնել ծայրահեղ աղքատությունը:

«ԷՐԵԲՈՒՆԻ-ԵՐԵՎԱՆ» ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԱՆՑԿԱՑՎԻ

Երեւանի քաղաքապետ Հայկ Մարությանի որոշմամբ, հոկտեմբերին նախատեսված «Էրեբունի-Երեւան» տոնակատարությունը չի անցկացվի:

«Երեւան քաղաքի 2021թ. բյուջեով «Էրեբունի-Երեւանի» համար նախատեսված ֆինանսական միջոցները կուղղվեն Երեւանի մշակութային հաստատությունների զարգացման ծրագրերին: Մասնավորապես, միջոցներ կհատկացվեն «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի եւ 90-ամյա հոբելյանը նշող Երեւանի պատմության թանգարանի արդիականացման ծրագրերին:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՕԳՈՍՏՈՍ

24.08.2021 Սուրբ Հովակիմի եւ Աննայի՝ Սուրբ Աստվածածնի ծնողների եւ Յուղաբեր կանանց հիշատակության օր

26.08.2021 Սուրբ Երեմիա մարգարեի հիշատակության օր

28.08.2021 Սուրբ առաքյալ Թովմասի հիշատակության օր

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻՑ ՄՈՊԵԴՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԿԴԱՌՆԱ ՊԱՐՏԱԴԻՐ

Մոպեդների գրանցումը պարտադիր կդառնա 2022 թվականի մարտ ամսից, մինչ այդ՝ գրանցումը կլինի կամավոր:

Վրաստանի խորհրդարանի արտահերթ նիստում, ներքին գործերի փոխնախարար Ալեքսանդր Դարախվելիձեն պարզաբանել է, որ այս գործընթացը ենթադրում է մոպեդների տեխզննում, համապատասխան անձնագրի եւ համարների ստացում, ճիշտ այնպես, ինչպես տրանսպորտային այլ միջոցների դեպքում:

- Այսօր մոպեդները գրանցված չեն, նույնիսկ՝ չունեն համարներ: Հեծանվի նման, ցանկացած մարդ, կարող է խանութում գնել ու օգտագործել: Ըստ առաջարկվող փոփոխությունների, մոպեդ վարել ցանկացողը պետք է վարորդական իրավունք ստանա. սա կլինի ԱՄ կարգի նոր վարորդական իրավունք, բայց եթե անձը որեւէ այլ կարգի վարորդական իրավունք ունի, նրան թույլատրվում է մոպեդ վարել,-նշել է Ալեքսանդր Դարախվելիձեն:

Երկու տարվա դադարից հետո՝ խորհրդարանը վերադարձել է «Երթեւեկության մասին» օրենքում նախատեսված փոփոխություններին: 2019 թվականի մայիսին նախաձեռնած օրենսդրական փոփոխությունները ներքին գործերի նախարարությունն առաջին ընթերցմամբ ներկայացրել է լիագումար նիստում:

Յ.Խ.

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ

«ԹԵԼՄԻԿՈ»-Ն ԵՎ «ԹԵԼԱՍԻ»-Ն ԿՎԵՐԱԴԱՐՁՆԵՆ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՄԱՐ ԱՎԵԼ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Վրաստանի էներգետիկայի եւ ջրամատակարարման կարգավորող ազգային հանձնաժողովը հանձնարարել է Թբիլիսիի էլեկտրամատակարարման ընկերություն ՍՊԸ «Թելմիկո»-ին եւ «Թելասի»-ին ուղղել գերավճարված գումարները:

Վրաստանի էներգետիկայի եւ ջրամատակարարման կարգավորող հանձնաժողովի տեղեկատվությամբ, ընկերությունները պետք է մեկ ամսվա ընթացքում էներգետիկայի եւ ջրամատակարարման կարգավորող հանձնաժողովին ներկայացնեն կուտակված-ների վերահաշվարկի մասին տեղեկատվությունը, հակառակ դեպքում՝ հանձնաժողովը կշարունակի քննարկել օրենքով նախատեսված պատժամիջոցները:

Հանձնաժողովի որոշմամբ՝ «Թելասի» եւ «Թբիլիսիի էլեկտրամատակարարման ընկերության» կողմից 2021 թվականի հունիսին եւ հուլիսին բաժանորդներին կատարված հաշվեգրումները համարվել են անհիմն, բացառությամբ՝ արդեն իսկ շտկված կուտակումների: Ընկերություններին հանձնարարվել է հաճախորդներից գանձել սպառված էլեկտրաէներգիայի համապատասխան դրույքաչափով, ինչպես նաեւ ապահովել, որ վերահաշվարկի արդյունքում հաճախորդների կողմից կատարված գերավճարները արտացոլվեն իրենց բաժանորդային քարտերի վրա:

Էներգետիկայի եւ ջրամատակարարման կարգավորող հանձնաժողովը կոչ է անում «Թելասի»եւ ՍՊԸ «Թբիլիսիի էլեկտրամատակարարման ընկերություն» բաժանորդներին, ընկերությունների կողմից խախտման դեպքում բաժանորդներին անհապաղ դիմել Հանձնաժողով կամ զանգել կենտրոնի՝ 16 216 համարի վրա»,-ասված է հայտարարության մեջ:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ՖՈՒՏԲՈԼ

ՎՐԱՍՏԱՆՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԱՐԿԱՆԻՇՈՒՄ ԴԻՐՔԵՐԸ ՊԱՀՊԱՆԵՑԻՆ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ազգային հավաքականների վարկանիշային հերթական աղյուսակը:

Հավաքականների նոր սանդղակում Վրաստանի հավաքականը պահպանեց դիրքերը եւ շարունակում է զբաղեցնել 91-րդ հորիզոնականը: Որոշակիորեն առաջադիմել է Հայաստանի ազգային ընտրանին, այն նոր աղյուսակում 88-րդն է:

Ինչ վերաբերում է վարկանիշային աղյուսակի առաջին տասնյակին, ապա այդտեղ փոփոխություններ գրեթե չկան: Աղյուսակը շարունակում են գլխավորել Բելգիայի, Բրազիլիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի, Արգենտինայի, Իսպանիայի, Պորտուգալիայի, Մեքսիկայի եւ ԱՄՆ հավաքականները:

ՉՆԱՅԱԾ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ, «ԱԼԱՇԿԵՐՏԸ» ՊԱՀՊԱՆՈՒՄ Է ԵՎՐՈՊԱՅԻ ԼԻԳԱՅԻ ՓԼԵՅ-ՕՖՖԻ ՓՈՒԼԸ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք,, Հայաստանի չեմպիոն Երեւանի «Ալաշկերտը» ֆուտբոլի Եվրոպայի լիգայի փլեյ-օֆֆի առաջին խաղում հյուրընկալվեց շոտլանդական «Ռենջերս»-ին եւ պարտություն կրեց 0:1 հաշվով:

Թիմերի պատասխան հանդիպումը կկայանա օգոստոսի 26-ին, Երեւանում: Չնայած պարտության, «Ալաշկերտը» պահպանում է մրցաշարի հաջորդ փուլ անցնելու հնարավորությունը:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Մեխանիկայի բաժին: 8.Մարզ ՌԴ-ում: 9.Փոքրիկ սրինգ: 10.Առողջարանային քաղաք Ղրիմում: 13.Աղանդեր: 18.Միջնադարյան բերդ, որը գտնվում էր Մեծ Հայքում: 19.Հրադատություն: 22.Քիմիական տարր: 23.Կենդանին՝ շունչը փչած: 28.Գերմանացի փիլիսոփա: 29.«Կնքահայր» վեպի հեղինակը՝ Մարիո ...: 32.Իսլամում թվաքանակով երկրորդ ամենամեծ դավանանքը: 33.Թատերագրական երկի կամ ներկայացման ամբողջական մաս: 34.Պարահանդեսային պար: 37.Կրակե: 39.Աշխարհի խոշորագույն թանգարաններից: 41.Ջրարջ: 44.Այծի էգ ձագ (բրբ.): 46.Գրող ... Խանզադյան: 47.Կախովի լուսատու: 49.Մաշկի վրա ի ծնե գոյացած բիծ: 50.Իրանահայ բանաստեղծ Արշալույս (Արշի) ...: 52.ԱՄՆ-ի Մոնտանա նահանգի վարչական միավորներից: 54.Շնորհք (բրբ.): 55.Իտալական ծագումով ֆրանսիացի մոդելյոր Նինա ...: 56.Վարչատարածքային միավոր Վալոնիայում (Բելգիա): 57.Պանրի ջուր: 58.Կեխտի հետք:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Թղթապանակ: 2.Վրացի դերասանուհի ... Քավժարաձե: 3.XIII դարում Վրաստանի թագավոր ... Գիորգի IV: 4.Պրինտեր: 5.Ֆրանսիացի գրող, սյուրռեալիզմի հիմնադիր ... Բրետոն: 6.Որովհետեւ, քանի որ: 11.Համակարգչային բաղադրիչներ արտադրող ընկերություն: 12.Թլիկ խոսող: 14.Կրծող՝ կաթնասունների ընտանիքից: 15.Խելագար: 16.Ըմպելիք, որը պատրաստվում է ջրից, մածունից եւ աղից: 17.Գլխի երկար մազ, ծամ: 20.Քիմիական տարր, ոչ մետաղ: 21.Կառույցի, առարկայի զարդարանքների համակարգ: 24.Գորշագույն-սպիտակ գույնի փափուկ մետաղ, կլայեկ: 25.Միացնել, ագուցել: 26.Ապառաժի ծայր, քարափ: 27.Նույնանուն քաղաքի վրա գտնվող պետություն Հյուսիսային Միջագետքում: 30.Չափազանց նիհար քոսոտ ձի: 31.Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության նախկին անվանումը: 35.Ռազմի աստվածը հին հունական դիցարանում: 36.Թռչուն: 37.Պտտվող խաղալիք: 38.Բախտավոր: 40.Ե'վ Տերյան, ե'ւ Թոթովենց: 42.Հնդիկ քաղաքական գործիչ Ջավահարլալ ...: 43.Ճապոնական ավտոմեքենա: 44.Վախկոտ, երկչոտ: 45.Քինախնդիր: 48.Ամոթ: 51.Առյուծի վզի մազը: 52.Շլաչք: 53.Ջերմ, եռման:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Բակուր: 4.Միքելաձե: 9.Որակ: 10.Մութ: 11.Լռել: 12.Մերի: 14.Նավ: 16.Արամ: 17.Ոճիր: 18.Քոբայր: 19.Ճավա: 22.Ոն: 23.Սեգ: 25.Բիզոն: 28.Աճ: 29.Կոնյակ: 32.Սոս: 33.Անպարտ: 34.Ավել: 37.Անի: 38.Տալ: 39.Օնորե: 42.Դո: 43.Գանա: 46.Նեղոս: 47.Անկարա: 48.Արկած: 50.Նունե: 51.Ռա: 52.Ուր: 53.Գգվել: 56.Անդո: 57.Նուշ: 58.Իվ: 59.Վեհ: 61.Կղզի: 62.Այովա:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Արագ: 3.Ռոպե: 4.Միմինո: 5.Քեթեւան: 6.Լալվար: 7.Ջնելաձե: 8.Խոսրով: 13.Արճիճ: 15.Աբովյան: 18.Քանոն: 20.Ազ: 21.Վոկալ: 23.Սոսե: 24.Գիսանե: 25.Բատատ: 26.Ակտ: 27.Դեբեդ: 30.Նպատ: 31.Արի: 35.Վագներ: 36.Ելակ: 39.Օղակ: 40.Նոր: 41.Ոսկան: 44.Նարգիզ: 45.Արագվի: 47.Անուշ: 50.Նինո: 54.Եվա: 55.Լեյ: 60.Հո:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈԵՎՈ ՄՈՆԱՅԱՐՄՈ: ԹԲԻԼԻՍԻ 0105, Գ.ԱՊՈՆԵԼԻՆ ՓՈՂՈՑ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աբոնելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆՈ»
ԹԲԻԼԻՍԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445